

7180

«ԱՅԼԱՍԵՐՈՒԱԾ, ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆ
ՌՈՒՍԱՀԱՅԵՐԸ»

Բ Ա Յ Ն Ա Մ Ա Կ

Վերականգնող Հնչակեան

Կուսակցութեան

«ՊԱՀԱԿ» ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹԻՆ

Գ ր է ց

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԵԼԻՔ

1919

KELEY, CALIFORNIA

Ամերիկա

329.14

Q-29

14
29

«ԱՅԼԱՍԵՐՈՒԱԾ, ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆ
ՌՈՒՍԱՀԱՅԵՐԸ»

Բ Ա Յ Ն Ա Մ Ա Կ
վերականգնող Հնչակեան
Կուսակցութեան

«ՊԱՀԱԿ» ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹԻՆ

Գ ր ե ց
ԱԼԵԿՍԱՆԴՐ ՄԵԼԻԲ

2001
1919
BERKELEY, CALIFORNIA
Ամերիկա



61980-0
-12

873.74

Ամերիկայի մէջ ապրող

Կովկասցի Հայրենակիցներ,

Ներկայ գրօյկս հրատարակում եմ գլխաւորապէս ձեզ համար, հասկացնելու ձեզ, թէ Ամերիկայում, ձեզ երջապատող հայերի մէջ ի՞նչ տեսակ արարածներ կան:

Բարոյական պարտք եմ դնում ձեզ վրայ՝ հայրենիք դառնալով պատմել ձեր սիրելիներին թէ ի՞նչ են գրում իրենց մասին Ամերիկայի հայ քերքերը: Այն հայրենակիցներ, որոնք անկարող են շուտով Հայաստան մեկնելու՝ բոլոր գրօյկս կարողաւոյց յետոյ դրկեն այնտեղ, իրենց մտերիմներին: Կովկասի բոլոր ֆաղափներում և գիւղական խրճիթներում բոլոր ժողովուրդը ճանաչէ, թէ ո՛վ է իր անկեղծ բարեկամը և ո՛վ է իր բռնամիտ: Թող Հայաստանի բոլոր անկիւններում ժողովուրդը հասկանայ, որ աստեղ — Ամերիկայում վրագրական աւագակների մի ամբողջ դասակարգ տարիներով աշխատած է Ամերիկահայութիւնը ապականելու, ջլատելով, փայփայելով մեր ցեղային ամբողջութիւնը:

Այս և յաջորդ գրօյկներին շարքով ուզում եմ ձեզ ծանօթացնել Ամերիկահայ լրագրական այդ աւագակախումբի հետ:

«ԱՅԼԱՍԵՐՈՒԱԾ, ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆ ՌՈՒՍԱՀԱՅԵՐԸ»

Բաց Նամակ

«Պահակ»-ին

Պարոննե՛ր,

Ամերիկայում ստեղծուած է հայ լրագրական մի
անձոնի զօրութ, որի սեպույն ներկայացուցիչնե-
րից մէկն էլ ձեր «Պահակ» թերթն է, Վերակազմեալ
Հնչակեան Կուսակցութեան պաշտօնական օրգանը:

Մի թերթ, որ աւելի շատ գործարան պէտք է
կոչել՝ խմբանքի, լուսանքի, ազտոտ անուանա-
րկութեան և անբարոյական, անխիղճ յարձակումնե-
րի՝ անհատների, խմբակցութիւնների, համայնքի և
մի ամբողջ ժողովուրդի դէմ:

Մի թերթ, որի ճակատի վրայ չարամտու-
թեամբ չէք ուղում դնել ձեր ամբողջ «հայրենասի-
րական գործունէութիւնը» բնորոշող նշանաբանը,
այն է՝ «Պահակ, Հակառուսահայ Սաղակրական հա-
լածանքի պաշտօնաթերթ»:

Ամերիկահայ ներկայ արտասուելի մտայնու-
թեան հանդէպ, երբ մարդիկ թիւրքն ու քուրդը մո-
ռացած իրար միսերն են գզգզում՝ դուք երեմիական
ողբ էք բարձրացնում հայ ժողովրդի անմխարանու-

Թեան համար՝ անմեղունակ դէմքով, համերաշխու-
թեան փրկարար ձիթենին մէկ ձեռքին մէջ, միւս
ձեռքով ապականութեան թոյն ցանելով հայ կեան-
քին մէջ։

Տարիներով դուք ձեր թերթովով, ձեր «մտա-
ւորական» հոշակած մտքի գեոմետրի բեմական աղ-
մուկ-աղաղակով ձեր խեղճ, ազնիւ և զոհարերող
հետեորդների տղիտութիւնը շահագործեցիք։ Տա-
րիներով Դօն-Քիչօտեան ասպետների սպառազինու-
թեամբ քամու ջաղացների դէմ մաքառեցիք, Հա-
յաստանի սահմաններից ութը հազար մղոն հեռու,
ազատ Ամերիկայի ապահով դրօշի տակ պատուաբա-
րուած, — այժ էլ սկսել էք թմբուկ զարկել, մարդ-
կանց գլուխը ցաւցնել «մե՛ծ և փառաւո՛ր յաղթա-
նակների անունով, ուզելով գերեզմաններից դուրս
սողացող հայ ուրուականներին համոզել, թէ իրենց
Ֆէնիքսի մոխիրների միջից վերածնունդով՝ մի-
այն ձեզ են նրանք պարտական։

Ո՞վ ձեզ, սակայն, իրաւունք տուեց հայ ժողո-
վուրդի փրկարարների գունագեղ քղամիդով զար-
դարուելու։ Ի՞նչ, դուք հայ ազգը ամբողջովին ա-
պուշների մի նախի՞ր կարծեցիք, որոնց կարողա-
նաք ամեն կարգի հէքիաթներ փչել, և մարտել տալ՝
անքննադատելի կերպով։ Կամ կարծո՞ւմ էք թէ ձեր
մէկ-երկու րնկերների ժանգոտած ատրճանակների
պայթումով Հայաստանի ազատութիւնը զնեցիք։
Ո՞ւր մնաց ուրեմն միլիոնաւոր հայ զոհերի թափած
արեան արժէքը, որոնց բոլորի գերեզմաններից ծա-
ղիկներ էք գոգանում, պսակներ հիւսելու համար
ձեր լերկ գլուխների վրայ։ Ո՞ւր մնաց տաանակ հա-
զարաւոր հայ քաջերի մահուան փառքը՝ Զէյթունի

լեռնային բարձունքներից սկսած մինչև Կուռ գետի
և Արաքսի եզերքները։ Բայց չէ՞ որ դուք Կովկասի
հայերին ուրիշ անուն չէք ուզում տալ, քան «մատ-
նիչներ», «յուզաններ», «ազգը թուրքին ծախող դա-
ւաճաններ»։

Ձեր մտաւոր և բարոյական սնամէջ մեծութեան
աշտարակի բարձունքի վրայ ելած՝ ինչ որ լրագը-
րական միմոսութիւններ էք անում, աժանագին ծա-
փեր խլելով մի քանի ողորմելիներից, որովհետեւ
ինչպէս Վիքտոր Հիւգօն է ասում — «Մի խենթ կա-
րող է գտնել մի ուրիշ խենթ, որ իր վրայ հիա-
նայ։» Պատգամներ էք որոտեցնում հայ ազգին, ըս-
տաւորաբաններ էք ուղղում Ֆրանսիային, Անգլիա-
յին — աշխարհի բոլոր մեծ պետութիւններին, միջ-
ազգային ամենից կնճոտ խնդիրները լուծում եր-
կու բառով, քարտէսներ դնում մատի մէկ շարժու-
մով։ Յաւիտենական պոռոտախօսութիւններով
զարդարուն ձեր խմբագրականներում, որոնց մէջ
պառաւ մամիկներն անգամ ամեն բան կարող են
գտնել, բացի խելքից և տարրական տրամաբանու-
թիւնից՝ դուք արամազդեան շանթեր և ամպրոպներ
էք ճարճատեցնում աջ ու ձախ, ձեր մեծութեան ու
խելացիութեան սիրահարուած՝ առանց մտածելու
որ աշխարհը փայտէ մարդուկներից գատ՝ ունի նաեւ
խորհող և վերլուծող իմացականութեան տէր ան-
հատներ, որոնք դիւրութեամբ կարող են անալիզի
սուր նշտրակը փորձել ձեր գլխի վրայ, ձեր մտա-
ւոր կարողութիւնների չափանիշը գտնելու։

Ձեր ուղեղային մարզանքների մէջ ճկուն էք
և արածգական, ամօթխածութեան ամեն կանոննե-
րին էլ վաղուց ձեր հրաժարականը տուած։ Յայտնի

չէ թէ ձեր դրական ի՞նչ անցեալում չաճած դափ-
նինքրից պատուանդան կառուցած՝ հայ ազգի ընդ-
հանուր լիազօր քննադատի պաշտօնի մէջ՝ հայ բո-
լոր գրադէտները մէկ բառով ծովն էք թափում, իբր
անարժէք ծակ գուլպաներ: Դուք ձեր կուսակցու-
թեան պաշտօնական Ծրագրի մէջ մի սե զերեղմա-
նաքար էք դնում բոլոր հայ գրադէտների վրայ,
հայհոյում ամենից պաշտելի անուններին, առանց
ամաչելու, առանց կարմրելու, առանց մաղաչափ
պատասխանատուութիւնից վախենալու, յայտարա-
րելով թէ «հայ ունեւոր և մտաւորական դասակար-
գը բաժին չունեցան մեծ ոգորումներուն մէջ»:

Գիտեմ, հարուստների վրայ տրամաբանական
պատճառներ ունիք յարձակւելու, եթէ ոչ ձեր խիղճը
հանդարտեցնելու Ունձեանի և Թաւշանձեանի սպա-
նութեան համար, գոնէ ձեզ արդարացնելու հայ ժո-
ղովուրդին առջև, որ վաղը միւս օրը ձեր կոկորդը
պիտի բռնէ և հաշիւ պիտի պահանջէ «մե՛ծ ոգո-
րումներուն» համար: Անշուշտ, այդ մութ դիտու-
մով էր, որ վերջերս այնքան սինիք կերպով հա-
ղորդում էիք ձեր ընթերցողներին մի ոճրածին ձեռ-
քով սպանուած Կիւլպէնկեանի «դիզած» մէկ միլի-
ոնից՝ երեք հարիւր հազար տալէրի կտակի լուրը՝
հայ ազգին: Տարակոյս չկայ, որ եթէ հայ ազատա-
գըրութիւնը վրայ չհասնէր՝ դուք նորանոր «արդար
դայրոյթի և վրէժի» առիթներ պիտի ստեղծէիք՝
տասնեակ հայ հարուստներ ևս Ունձեանի և Թաւ-
շանձեանի այժմեան բնակավայրը զրկելու, քանի որ
սկզբունքով որդեգրած էք այդ «երկարար քաղա-
քականութիւնը»: Ի՞նչ կայ աւելի դիւրին, քան
հիպոստացնել տկար ուղեղի տէր թշուառներ, և

ստիպել նրանց ոճիրներ դործելու, «Հայաստանի
ազատութեան», և այլ «սրբազան նպատակների և ի-
դէալների» անունով:

Ես, սակայն, չառ հեռու լինելով հայ կրեստո-
ների փաստարանը լինելու փափաքից՝ թողնում եմ
որ այդ մասին ուրիշները աւելի երկարօրէն ձեզ հետ
խօսեն:

Այժմ, հարցնում եմ ձեզ.—

Ո՞վ էք դուք, որ յանդգնում էք դատապարտու-
թեան սե կնիքը դրոշմելու հայ գրադէտների անուն-
ների վրայ, այն էլ ձեր կուսակցութեան պաշտօ-
նական Ծրագրի մէջ, «մե՛ծ ոգորումներուն» մէջ
փղի բաժինը ձեզ յատկացնելով, և նրանց ուրանա-
լով նոյն իսկ մի մըջիւնի աշխատանք: Ո՞վ էք դուք,
որ համարձակւում էք հայ գրականութեան անհա-
րազատ զաւակներ հռչակելու այն բոլորին, որ ձեր
«մտաւորական հոյակապ սպայակոյտին» չեն ա-
պաստանած, իրենց իբր թէ ողբալի տղիտութեամբ,
աննկարագրութեամբ և ցեղի մարտիրոսագրութեան
հանդէպ խուլ ու մունջ մնալու յանցապարտ դեր-
քով:

Երկու բառով դուք սնանկ էք յայտարարում
ամբողջ տասնեկնիքորդ դարու հայ իմացական
կեանքը, և պատմութիւնը գրում մի թոյնով, որ
դոյն չունի: Ի՞նչ էք ուզում զրանով ասել: Ըմբռո-
նո՞ւմ էք արդեօք ձեր խօսքերի իմաստը:

Պարոնե՛ր, մի՛ ուրանաք պատմական իրողու-
թիւնները: Ձեր հայրերը, այնտեղ — թրքական դը-
ժոխքի մէջ թիւրք աղտոտ գաֆթիկների և քիւրդ
խօլամների հոտած ոտքերն էին լիզում, իրենց ըն-
տանեկան յարկը ապականելուց յետոյ, փառք տա-

լով ամենագուժ Արարչին, որ գոնէ այդ վեհանձն տիրողները խնայում էին իրենց կեանքը — մի՛ ուրանաք, պարոններ՝ — ճիշդ այդ օրերում, հայ դրազէտների առաջադաս գունդը հրապարակ էր նետում ըմբոստութեան կարմիր դրօշը ծածանելով: Տասնեկնիկորդ դարու նախօրեակին Քանաքեռ գիւղացի Խաչատուր Աբովեանը հայ ժողովուրդին էր տալիս մի նոր աւետարան — իր չքնաղ «Վէրք Հայաստանի» հատորը. հայ տառապանքի մեծագոյն վիպագիրը — Բաֆֆին՝ Մոսկուայի «Հիւսիսարեւել» հանդիսի մէջ 1858-ին հրատարակում էր իր «Ձայն Տո՛ւր, ո՛վ Ծովակ»-ը: Նալբանդեան, Ստեփանոս Նազարեան, Սմբատ Շահադիդ, Գամառ — Քաթիսյան, Արծրունին, Պէշիքթաշեան, Ալիշան, Խրիմեան, Փօրթուղայեան՝ հայ ժողովուրդի վերածնութեան առաքեալները՝ իրար ետեից, շարան-շարան մեր մտաւոր խաւար հորիզոնի վրայ էին յայտնում, որեւան արշալոյսի ռազմերդը հրնշեցնելով, մեծ դիակը վերակենդանացնելու համար: Եթէ պատմական այդ դէմքերի հանդէպ չէք ուզում երկիւղածութեամբ դիտարկ հանել, նրանց դրական ոչնչութիւններ անուանելով՝ որո՞նք են ձեր գրական անձանոթ հանճարները, որոնց անունները, բացի ձեզանից, ոչ ոք գիտէ: Եւ չլինի՞, որ դուք ձեզ էք համարում այն միակ մարդարէները, որ առաջին անգամ Կարմիր Առաւօտի մօտալիութիւնը զուլակեցիք: Չլինի՞ թէ դուք համոզւած էք, թէ հայ ժողովրդի վերածնութեան նախավիաները ձեր «հոյակապ կուսակցութեան» սրբազան արգանդի մէջ միայն սաղմնաւորուեցան: Դուք պաշտօնապէս, ձեր կուսակցական Ծրագրով և թերթուկով հայ գրա-

դէտների ամբողջ դապակարգի նուիրական աշխատանքի վրայ թքնելով հանդերձ, չէք կարող հերքել, որ նոյն իսկ ձեր կուսակցական հրապարակային հանդէս-ժողովների գունատութիւնը ու խեղճութիւնը ծածկելու համար՝ շարունակ ստիպուած էք այդ ձեր արհամարհած հայ դրազէտների մտքի ու սրտի աշխատանքը շահագործելու: Կարո՞ղ էք ուրաշալ այդ: Ո՞վ յանցաւոր է արդեօք, որ դուք չէք կարողացել դատախարակուիլ ու բարեկրթուիլ, յարգանքով խօսելու համար հայ ժողովրդի ուսուցիչների մասին, որոնց պայծառ մթնոլորտի մէջ սնուած ճշմարիտ հայեր, գունատ ու զողոթնուն՝ մինչև այսօր լալազին երգում են «Մայր Արաքսի ափերով»ը, «Ազաւան Աստուած այն օրից»ը, «Մեր Հայրենիք, թշուառ, անտէր»ը — երգում են աշխարհի ամեն անկիւններում, ուր միայն հայ կայ, Կովկասի խուլ գիւղերից մինչև Փարիզ և Մանչէսթըր, Լեմբերգից և Բուկովինայից մինչև Բալկանները, ձեր դժոխք ծննդավայրից մինչև Հարէ՛խստան և Մահարա, Գանդէսի եզերքներից մինչև Բօրնէօ, ծաւալ Մէլբուրն — երգում են, ինչպէս Սաղմոսն ու շարականը կարելի է երգել: Հայ դրազէտները — ժողովուրդի իրական հայրերի խնկարոյր տաղերն են նրանք — այդ երգերը, պարոններ՝, որոնց հեղինակների վրայ դուք այսօր ցեխ էք չզըրտում անմաքուր ձեռքերով:

Եթէ դուք, պարոններ՝, «Մնաս բարեր» ասած էք զրական պարկեշտութեան, և թերեւ շատ ուրիշ պարկեշտութիւններին, ախբանք զիտցէք, որ գոնէ երկրի հայութիւնը — «Մեծ Նահատակը» որին դուք թիւրքական եաթաղանի տակ ձգած՝ ձեր կաշին ա-

զատելու համար այս հեռուոր աշխարհն էք փախել
— լս'ւ գիտցէ՛ք, այդ Մեծ Նահատակը Միջագետ-
քի արևակէզ անապատներում գեղերոյ կմախքների
ահաւոր քարաւանների սրտիւն շարքերով՝ պիտի
փկայէ իր սրտի ու հոգու ալօթքը. ալօթք՝ մաքի
և գրչի այն աշխատարանների յիշատակին, որոնք
մեռան տաճեակներով և հարիւրներով իրենց մեռ-
նոյ ժողովուրդին հեա, որոնք մեռան այն ժամա-
նակ, երբ դո՛ւք — Հայաստանի ազատարարներ, Ա-
մերիկեան դրօշին տակ՝ հանգիստ ու ապահով՝ ըզ-
րադուած էիք ձեր թերթուկին մէջ մրտելով ու
հայհոյելով աջ ու ձախ, պատուելին ու տէրտէրը,
Հնչակեանն ու Ռամկավարը, Դաշնակցականն ու
Բօլշևիկը, Միաիօնարն ու Կարմիր Պաշտ — մի
անձոսնի զալածօշի մէջ, որ նոյն իսկ դուք չէիք
կարող կլլել: Այո՛, երբ դուք այստեղ գրադուած
էիք ժողովուրդի մէջ նորանոր հաստաւածաւորում-
ների խրամատներ բանալով, և միշտ էլ՝ համերաշ-
խութեան ձիթենին ձեռքին մէջ՝ և կենսական փա-
փուկ հաճոյքներ էիք վայելում, համեստօրէն, ձեր
«ընկերներ»ի և «ընկերուհիներ»ի ախորժելի ընկե-
րակցութեան մէջ, կամ փալման քաւերով Ատ-
լանդիքից դէպի Սաղազականի եղերքներն չափչը-
փում փափուկ օթոցների վրայ բազմած, ծունկը
ծունկի վրայ՝ ճիշդ նոյն վայրկեաններին հայ մըտ-
քի աշխատարաններ՝ արդէն կեանքին մէջ մշտա-
պէս տառապած՝ յօշոտում էին մահմեաական բորե
նիների ճանկերում, անշուշտ չգիտնալով, որ պիտի
զանուէին աշխարհի մէջ հայ բորենիներ ևս, որոնք
նրանց անձանօթ գերեզմանները պիտի ջանային աղ-
տոտել իրենց պիղծ շունչովը:

Սակայն այս ամենը կաթիլներ են հայհոյանքի
ու անարդ անուանարկութեան այն ուկիանի, որ
տարիների ընթացքում դուք ստեղծեցիք: Հատորներ
կարելի է գրել, ձեր լրագրական իմաստակութիւն-
ներից հազարաւոր քաղաւածներ հաւաքելով, որոն-
ցից օտարտի մի ցուցահանդէս կարելի է կազմել,
ձեր մաքի հրաշալիքների անզուգական օրինակնե-
րով, և որոնց վրայ եփած հաւերն իսկ կարող են
ծիծաղել: Ուզո՞ւմ էք որպէսզի ևս յանձն առնեմ
այդ անախորժ, ստեղծ թեթեւ աշխատանքը, ձեր
մտաւոր անանկութեան մի փառաւոր կոթող կանդ-
նեցնելով ձեր անունների վրայ:

Հայ գրագէտների ամբողջ գոտակարգը անուա-
նարկելու ձեր ողբալի ջանքերը՝ միակ յանցանքը
չեն, ստեղծ, որ հանրային բարոյականութեան
դէմ էք դործում:

Դո՛ւք, պարոններ՛ր, տարիների ընթացքում այն-
քան թոյն, առելութիւն և հարածանք չէք ցանած
հայ ժողովուրդի զարաւոր թշնամու — Թիւրքի
դէմ՝ որքան Ռուսահայութեան դէմ: Տարիներով
դուք մի նողկալի աշխատանքի էք լծուել, որի աշ-
խուղակութիւնը բնորոշելու համար անհնարին է
հայերէն լեզուի մէջ ճշգրիտ մի ամական գտնել:
Սաղակրական անդուլ արչաւանք՝ մղելով Կովկա-
սահայութեան դէմ, հորթի այն տրամաբանու-
թեամբ, թէ Կովկասահայութիւնը ցեխոտելով՝ ձեզ
ստելի և ձեր կուսակցական յառաջխաղութեան դէմ
կեցած մի փառնդաւոր ախոյեան հանգիսացող կող-
մակերպութեան թեւերը կոտրած կը լինիք՝ կանդ

էջք ուղղում առնել ոչ մէկ միջոցի առջև, որքան էլ այն անազնիւ, վայրագ և անհունապէս ստոր լինի: Հազարաւոր զբոսիւթիւններ մրոտած էք տարիներ շաբուշակ՝ Կովկասի հայութեան պատկերը զծելու համար ամենազգուշի ներկերով: Ձեր խղճալի, իմաստակ խմբադրականների անվերջ շարքերով — ձեր թերթուկի լուրերի բաժնով, նոյն իսկ նրա այսպէս ասած «գեղարուեստական» բաժանմունքով — վէպերով և այլ շուկայական թխուածքներով՝ դուք հազար կտոր էք լինում ցոյց տալու համար, որ Կովկասի երկու միլիոն Ռուսահայութիւնը հոտած մսի կտորներ են միայն, որոնց վրայ ձեզ նման բարոյական մաքրութիւններ, և նոյնան տապանից ժառանգարար մնացած անխարդախ, իսկական հայեր պէտք է միայն թքեն և կողքից անցնեն: Դուք վարժուել էք Կովկասի բոլոր անցուղարձերին, հասարակական բոլոր դէմքերին նայել թէք հայեացքով, բնազդարար հնազանդուելով ձեր հիւանդ մտքի ուղղութեան: Բաւական չէին, կարծես, Բոստոնի ձեր գիտանոցի «լուրջ ուսումնասիրութիւններն ու հմտալից հետազոտութիւնները» հեռադիտակով՝ Կովկասի գծովքը պատկերացնելու համար ձեզ վրայ հիացողներին, այլ և վերջերս ճարպիկութիւնն ունեցաք ձեր թերթուկին մէջ հիւրընկալելու լրագրական մի անվայել Ձօիլ, Աղզունի կեղծանուան տակ ծածկուող մի զրջակ, որ Մանջուրիայի մի մութ ծակի մէջ պատսպարուած՝ հրեղէն շանթեր է ճարձատեցնում Կովկասի ամբողջ հայութեան գլխին: Խորը քունից ելնել և առանց լուացւելու հայհոյել փողոցը հանդիպած ամեն անհատ և անունը դնել «քննադատութիւն»,

«ազգային շահերու համար կուսակցական ազնիւ պայքար» — այդ մի արհեստ է, որ միայն ձեր դասակարգին է ծանօթ: Դուք «քննադատութիւն» էք անուանում, երբ փալան կարող մէկը Փարիզի մօզանների մասին է խօսում, և չէ «հաւնում», երբ գրել-կարդալ չգիտցող մի ջորեպան Մարքսիզմի և գիտական ընկերութեան մասին է ճառում, երբ Հիւսէյնիկցի մի ժամկոչ Հէգէլի կամ Կանտի փիլիսոփայական տեսութիւններ է «վերլուծում»: Ինչէ՞ր միայն չեն կատարում Ամերիկահայ մամուլի և կասկածելի «գրականութեան» մէջ: Մինչև այսօր հրապարակի վրայ է ծախուած բժշկական մի դիրք, որի հեղինակը ծնունդով նապարավաճառ է, կարելի է գնել հինգ տալէրի՝ Հիպոթիզմի մասին մի զբոսով, սորվելու համար «ուրիշ անհատները կամքիդ ենթարկելու գաղտնիքը», որի հեղինակը կօշիկի գործարանի մէջ, գործաւոր է, կեանքին մէջ զբոսով պատերը չտեսած և ազգանունը գրելիս մի շարք տառասխալներով զարդարող: «Գրագէտ» «խմբագիր», «գիտնական», «փրօֆէսոր» տիտղոսները վաստակելու համար այս երջանիկ աշխարհում յաճախ ոչ կրթութիւն, ոչ դաստիարակութիւն, ոչ որ և է մտաւոր պաշար, ոչ էլ նոյն իսկ ուղեղ պէտք են, այլ միմիայն կօշիկի նրբանի չափ դէմքի հաստ կաշի, որ կարմրել չգիտնայ:

Ձեր մտաւոր սպայակոյտը ներկայացնող չքնաղ հաւաքածոն էլ անծանօթ գեղեցկութիւններ չեն ինձ համար, պարոններ: Ի՞նչ պիտի շահիք, եթէ այսօր ելնէք հաստատելու, թէ ձեր թերթուկի աշխատակիցների չքեղ աստեղախումբը հայ գրական երկնակամարի շողջողուն զարդեր են ու գոհարներ,

քանի որ մի գարնան արտառնին նոյն իսկ կարող է հազարաւոր մէջրերումներ անելով նրանց «գրական հանրագիտարանից՝ հակառակը հաստատել: Չեր պաշտօնական թմրկահարը — մի ինչ որ Մեսիական՝ իր խղճալի «Դրօշին Տակ» գրքով փոխանակ ձեր կուսակցական առաքելներին անունը յարգելի դարձնելու՝ նրանց զաւելտական լարախաղացողների դերեր յատկացրեց, մի յիմարութիւն էլ դուրս նետելով («Մեծ տաղանդի մը յայտնումը») վերնագրով՝ ձեր թերթուկին մէջ, ձեր խրմբագրի հետտորական անգուգական հանձարի գիւտը աւետելով քնացած ամերիկահայութեան: Չէ՞ որ ձեզ էլ լաւ յայտնի է, որ ծիծաղելի եղած էք ինքնագովումի նման փորձերով:

Չեր հեղինակաւոր, իրազեկ, քաջատեղեակ աշխատակիցը — Ազգունին, անշուշտ որոշապէս թելադրուած և ներշնչուած ձեզ ա ն ի ց՝ իր քննական ներշնչումներին սանձարձակ թեւեր է տալիս ձեր թերթուկին մէջ, Քաջաղնունի, Ահարոնեան, Սատիսեան, Տիգրանեան — Կովկասի բոլոր գրական-հասարակական, քաղաքական ղեմքերը մէկ-մէկ դատի է կանչում, իրենց անցեալի և ներկայի հաշիւները պահանջում, վճիռներ արձակում, իրրեւ մատնիչներին, յուղաներին, ազգի արցունքն ու արիւնը շահագործող աւագակներին, ապա մէկ-մէկ խաչ հանում, և այնուհետեւ Կովկասի մնացած հայութիւնն էլ՝ տղայ-աղջիկ, ծեր ու երիտասարդ — բոլորը մէկ կողովի մէջ լեցնելով՝ նետում մի թուքի փոսի մէջ, վրան մուր լցնում և դոցում, և խաչ անում երեսին, իրր իսկական, անխարդախ հայ:

Եւ դուք էլ այս ամենը խնամքով, գուրգուրանքով ապում էք ձեր կուսակցութեան պաշտօնաթերթում:

Եւ խօսում էք խղճի, ազնութեան, նկարագրի, հայ պատուի, սուրբ խեղանքի և ցեղային պաշտամունքների անունով:

Սօսում էք «մամուլի ազատութեան» անունով, ձեր կուսակցական Մրադրի շեշտուող մի յօդուած էլ այն դարձնելով:

Մամուլի ազատութիւնը, պարոններ, տրուած է ազնիւ և մաքուր նկարագրի ունեցող անձերին և համայնքներին — նա հայհոյիչների, խառնակիչների, աւագակների և ոճրագործների համար չէ ստեղծուած: Մամուլի ազատութիւնը տրուած է տարբեր մտածելակերպի տէր անհատներին, միջոց տալու նրանց ազատօրէն արտայայտուելու, պայմանաւ, սակայն, որ այդ անհատները լինին ազնիւ, խոհուն և անպայման համայնքին օգտակար: Այլապէս, եթէ մամուլի կամ խօսքի ազատութեամբ օգտուելու արտօնութիւն ունենան նաեւ ստախոսները, զրպարտիչները, խառնակիչները, աւագակները, պոռնիկներն ու մարդասպանները, և իւրաքանչիւրը դրանից իր արհեստը կամ որդեգրած բմրոնումները ազատ կերպով քարոզելու, թերթեր հիմնելու, գաղափարակիցներ որսալու պատեհութիւններ գտնէ՝ ապահովարար աշխարհը կարճ միջոցին խենթանոցի կը վերածուի: Հանրային բարեկեցութեան համար անպայմանօրէն օգտակար և վստահելի անհատներ՝ կարծիքների և գաղափարների ազատ հակամարտութեամբ ձգտում են ձգմարտութեան ընդհանուր եզրներ գտնելու, ոչ թէ իրենց անձնական «ես»ի

Համար պայքարելով, այլ հանրութեան երջանկութիւնը աւելի մաքուր, չինիչ և վսեմ հոսանքի մէջ ղենելու: Համալսարանական պէտք չէ լինել՝ մամուլի կամ խօսքի ազատութեան ինչ լինելը հասկանալու համար: Նոյն իսկ լեռների մէջ ապրող մի ծերուկ, խոհեմ մտքի տէր հովիւ՝ անպաճոյճ բառերով կարող է այդ ազատութեան սահմանները դրծել: Իսկ դուք և ձեր դասակարգին պատկանողները մամուլի ազատութիւն բառերի տակ հասկանում էք սանձարձակ արտօնութիւն ծանօթ—անծանօթը անարգելու, ցեխոտելու, վարկարեկելու, բարոյապէս մեղցնելու միայն և միմիայն կուսակցական գոհձիկ և բացարձակ անբարոյական պայքարի համար:

Դուք ուսումնայ մտաւորականներին «պնակալէզ», «մակարոյճ», «հարուստների սեղանի ոսկորները կրծող» ներկայացնելու անբարեխիղճ համարձակութիւնը կոչում էք «մամուլի ազատութիւն» և «քննադատութիւն»: Կովկասահայ գրադէտների ամբողջ դասակարգը ձեր խօսքով թիֆլիսի և Բագուի միլիօնատէր հայերի հետ քամուռելու և նրանց փշրանքները կրծոտելու համար՝ մազաչափ չեն հետաքրքրում բուն ժողովրդով, յիսուն կամ հարիւր մղոն զիւղերից հեռու ապրելով, անձնատուր եղած չուայտ ու զեղիւ կեանքին:

Դուք անմտութիւն պիտի համարէք եթէ մէկը ձեզ ձեր ձեռով պատասխանելու համար ձեզ հարցնէր թէ՛ պարոններ, իսկ դուք ինչո՞ւ էք վսեմօրէն բաղմէկ ձեր Բօստոնի Օլտ Սաութի Պիլտինկի ութերորդ յարկում, երբ Հայաստանի համար էք գորգոռում: Կամ կարծո՞ւմ էք թէ հայ ժողովուրդը ծայ-

րէ ի ծայր այնպիսի քառակուսի դանդերից է բաղկացած որոնց կարողանաք համոզել, թէ ութը-տասը հազար մղոն հեռու, ձեր խմբագրատան պատուհանից բուռնցք ձօճելով Սուլթաններին և Քիւրդիտանի չէյխերին՝ իրապէս «Մեծ Եղեռն»ի հեղինակները մկան ծակերի մէջ պիտի ձգմէք, և այդ տեսակ «մեծ ոգորումներով» նահատակ հայութեան համար մի շնաշխարհիկ դրախտ ստեղծէք: Իսկ թէ Կովկասի հայ գրադէտները պնակալէզների մի դասակարգ են ներկայացնում — այդ լուտանքը այնքան անհունապէս սուղ է, որ ուէ պատուախնդիր մարդ պիտի չուզէր ձեզ հետ բանակուել մանկ, Շիրվանզադէի, Լէօյի, Ահարոնեանի, Թումանեանի և իրենց ամբողջ շարքի նկարագիրը ձեզ նմաններից պաշտպանելու համար:

Թողնեմ այդ ամենը, որովհետեւ եթէ փորձեմ նման յանցանքների մէջ ձեզ բռնել՝ դուք հազարաւոր պատեհութիւններ տուած էք, որոնց իւրաքանչիւրով կարելի է օգտուել, չառ լաւ ճանաչելով ձեր մտաւոր-բարոյական ամբողջ ուղմամթերքը նոյն իսկ այնպիսի խնդիրներ մէջ, որ ինձ ամենեւին չեն վերաբերում:

Սակայն ձեր յանցանքների մէջ կայ մէկը, որ ոչ մէկ կերպ աչքից չի կարելի փախցնել — դա ամբողջ երկու միլիօն ուսումնայութեան բարոյական նկարագրի վրայ նետուած ձեր խելագար հայհոյանքն է:

Դուք յայտարարում էք, ձեր կուսակցական պաշտօնաթերթում, թէ Կովկասի հայութիւնը բարոյապէս ամբողջովին ապականուած, ալլասերուած, նեխուած մի դարչահոտ զանդուած է, թէ հայ

ընտանիքներ չեն մնացած այնպեղ ալլես, թէ հայ
կիները անթառամ պչրուհիներ մնալու և տեական
հաճոյքներ ունենալու նպատակով վերածուել են
մէկ-մէկ անտառակուհիների, անձնատուր եղած են
չուսյա ու անբարոյական կեանքին, իրենց մէջ մե-
ռած է ալլես կանացի ամենից նուիրական բնազդը—
դուակ ունենալու ձգտումը, ամեն կերպ աշխատում
են իրենց գեղեցկութիւնը թարմ պահելու համար
դուակ չունենալ, մաշք չեն, և ալլեն, և ալլեն և ալլեն:
Ձեր խօսքով, Կովկասահայութեան մէջ ալլես մնա-
ցած չէ ոչ հայ պատիւ, ոչ հայ զգացում, ոչ հայ
ամօթ, ոչ ցեղային աւանդական որ և է մաքրու-
թիւն, ոչ ընտանիքի խեղճ:

Ուրեմն, ձեր խօսքով, Կովկասահայութիւնը իբր
ամբողջական զանդուած՝ իրենով ներկայացնում է
մի հսկայական, ճիւղալային պոսնիարան, մարդկա-
յին պատմութեան մէջ չեղած ահռելի անբարո-
յականութեան մի Բարիսն, մի Սոլոմ-Գոմոր, որի
գարշահատութիւնից ձեզ նման առաքելի Ղովտեր
նոյն խի աշխարհի միւս ծայրում ստիպուած էք ձեր
տան գոնեքը պինդ գոցել, ձեր ընտանեկան անդու-
դական սրբափայլը պաշտպանելու համար վարա-
կիչ, պիղծ շունչից:

Դուք, պարոններ, հանդիստ խղճով տպադրուծ
էք ձեր կուտակցական պաշտօնաթերթում այդ դար-
չելի հայհոյանքները մի ամբողջ Ժողովրդի դէմ,
այնպէս մտածելով, թէ կարող էք անպատիժ կեր-
պով ձեր ոճրագործ գուր ձեր անձնական առաքե-
լութիւնների արժէքովը քշել լրագրական այս ա-
ժան շուկայի մէջ:

Անհունապէս զգուսնք զգուրով Կովկասահայու-
թեան բարոյական նկարագիրը ցեխտակ ջանացող
այդ ապստ և սուր յոգածաշարքը զարգարող
դոնհիլ լուսանքների հեղինակների հանգէպ՝ թող-
նամ եմ որ հետաքրքրուողները փնտեն «Պահակ»-ի
Մարտ—Ապրիլ ամիսների թիւերը, և մասնաւորա-
պէս Ապրիլ 14-ի թիւը:

Դուք, «Պահակ»-ի պարոն խմբագիրներ, կարո՞ղ
էք յայտարարել, թէ դուք պատասխանատու չէք
ձեր թերթում լոյս տեսնող թխումքների համար:

Ձեր ներկայ վիճակից մէկ տատիճան սրամիտ
կղէք, պարոններ, պատկերացնելու համար մէկ օր,
երբ դուք գէժ առ գէժ կանգնէք Կովկասահայ մի
պարզուկ մարդուն — մէկ գեղջուկին կամ սովո-
րական գործաւորին — և դուք սկսէք հայհոյել նրա
մայրը, քոյրը, կիներ — հայհոյել այնպէս, ինչպէս
այստեղ, Կովկասահայերից հետո, մի սպանով վայ-
րի մէջ էք հայհոյում: Ի՞նչպէս կ'ուզէիք, որպէսզի
նա ձեզ պատասխանէր: Յօդուած գրէր: Ատենախո-
սութիւն անէր: Դատարա՞ն վաղէր: Կամ կանգնէր,
ձեր մէկ հայհոյանքին հաղարձով պատասխանէր:
Անբնական պիտի համարէք, եթէ այդ Կովկասահայ
պարզուկ գիւղացին կամ գործաւորը ձեզ պատա-
խանելու համար ուրիշ միջոց չգտնէր, եթէ ոչ Ֆի-
դիբական կոպիտ ոյժը — հաւատարիմ մնալով իր
ընածին գիւրագրգիւ խառնուածքին, որի համար նա
ընաւ պատասխանատու չէ: Եթէ դուք հայ ընտա-
նիքները հայհոյող թիւրքի, քուրդի, տարբի, պար-
սիկի համար կախաղաններ էք կանգնեցնում, «ար-
դար հատուցում» և «սրբազան վրէժ» կոչելով ձեր
քայլը, ի՞նչպէս կ'ուզէք, որպէսզի մենք — Կովկաս-

893.74



ցիներս ձեզ հետ վարուենք, դուք, որ ձեզ ոչ թէ թիւրք, քիւրդ, մլթոնի էք կոչում, այլ մաքուր, չխաղախուած արիւնով իսկական հայ:

Ես, սակայն, իմ բոլոր հայրենակիցներիս ուզում եմ թելադրել, պաղարին լինելու, և ձեր դասակարգին պատկանող հայհոյիչներին պատասխանելու —

«Պարոնե՛ր, մենք այլասերուածներ չենք. մենք անբարոյականներ չենք: Մեր մայրերը ձեր նկարագրած պոռնիկուհիներ չեն: Մեր մայրերը իրենց կոյրձքի վրայ, իրենց սուրբ կաթով անած են ձեզ: Նէրանք անած են տառնեակ հաղարներով այն երիտասարդներին, որոնք արին թափեցին ձեր հայրենիքի, մեր հայրենիքի — բոլորիս հայրենիքի կարմիր արչալոյսին համար: Որոնցից հաղարներ բնկան՝ պարտքի ասպարէզի վրայ, որոնցից հաղարներ այս վայրկեանին իսկ՝ սովի, ժանտախտի և անհուն տառապանքի և թշուառութեան մէջ՝ մահուան կոխ են մղում հինաւուրց բորենիների դէմ: Պարոնե՛ր, մեր քոյրերն ու կիները փճացած, ընկած, հայ ամօթն ու պատիւը կորցրած արարածներ չեն: Կէս միլիօն հայ մանուկներին կերակրում են այժմ իսկ հայ կիները — Կովկասում: Կերակրում են իրենց կրձքի կաթով, ապագայ հայութեան մի ամբողջ սերունդ պատրաստելով: Կերակրում են նաև ձեր դժոխք ծննդավայրից տասնեակ հազարաւոր որբերին, որոնք նոյնպէս մերն են, մեր որբերն են, մեր սիրտն ու հոգին, հոգ չէ թէ դուք մեզ հայ չանուանէք և թիւրքից աւելի ատէք: Մեր որբախնամների, բարեգործականների, կարմիր խաչերի կիները այլասերուածներ^ը են, անառակուհիներ^ը —

նրանք՝ որոնք հարիւրներով մեռան տառապանքի երկրին մէջ: Զէ՞ք ամաչում: Փճացած դասակարգ ամեն հասարակութիւնն էլ ունի, սակայն ո՞վ պիտի յանդգնի ամբողջ ամերիկահայութիւնը անառակահոգ կոչելու, այն պատճառով միայն որ այդտեղ — Զբլսի, Փրավիտէնս, Բօստոն, Վօթըրթաուն կամ Նիւ Եորք մի շարք հայ անբարոյական կիներ և այլեր կան: Իսկ դուք — դուք, չէ՞ք ամաչում:»

Այդպէս պիտի ուզէի որ խօսէին բոլոր հայրենակիցներս, ձեզ հետ:

Գիտեմ թէ ի՞նչ պիտի զգաք այս տողերը կարդալով, «Պահակ»ի հայ խմբագիրներ: Երեք հազար մղոն հեռաւորութիւնից կարող եմ դիտել ձեր դէմքի ջիւղերի անախորժ խաղը, ոչ թէ այն պատճառով, որ իսկապէս ամաչում էք դուք, այլ որովհետեւ տեսնում էք, որ մի փոսի մէջ էք ընկած:

Պիտի զգաք, որ կուսակցական պայքարի մի եղկելի, ոչ-նազմական դարձումս ձեզ հոգը սկսում է սահիլ ձեր ոտքի տակից:

Պիտի հասկանաք այժմ, պարոնե՛ր, որ դանդաւեցաւ նոյն իսկ Կովկասից շատ հեռու մէկը որ ձեր երեսին է նետում, առանց աւելորդ ձեւականութիւնների՝ ձեր անարգ դերը: Պիտի հասկանաք, որ անապատի ամալութեան մէջ չէ որ հնչեցնում եմ խօսքերս, այլ որ սրանով կոչ եմ անում իմ բոլոր հայրենակիցներին՝ իրենց տան մէջ չընդունել իրենց մայրը, կինը, քոյրը հայհոյողներին:

Մի՛ փորձէք կմկմալու, թէ «Ախրա՛ր, Ինչ ուրինք որ: Առանկ չէինք ուզեա ոսկւ, այլ ըսել կ'ուզէինք թէ գէշն ալ կայ, աղէկն ալ կրնայ ըլլալ», և այլն, և այլն: Արդէն դուք, Կովկասահայութիւնը

իրր ընդհանուր դանդուած՝ շարունակ ցեխտելով, մրտելով և հայհոյելով՝ երբեմն էլ զգում էք, որ շատ վտանգաւոր խաղ էք դարձնում, և այդ պարագային գտնում մի փրկարար ծակ: զուրս փախչելու համար, իրր մխիթարութիւն կովկասահայերին, երբեմն էլ յիշելով, թէ «ամենքը գէշ չեն, այլ մեծամասնութիւնը միայն»: Անշուշտ, թուարանական տարրական գիտելիքներին քաջատեղեակ՝ կարող էք փերջը («մասնաւոր») եղանակով բացատրել, թէ «մեծամասնութիւն» ասելով՝ պէտք է հասկացուի 50 տոկոսից փեր, նոյն իսկ 99 տոկոս, իսկ մէկը պէտք է ընդունիլ իրր «փոքրամասնութիւն»: Հազարից, 10 հազարից մէկը՝ իրր «բացառութիւն»:

Ի՞նչ ձեռնածուներ էք դուք:

Ձեր անդուգական աշխատակիցը — Ազգունին՝ մի ինչ որ Դշխոյեան՝ Կովկասեան Ողիսխականից յետոյ փերձապէս յաջողեցաւ Ֆրէզնօ նետուելու, ամբողջ Միբիրի և Մանչուրիայի երկարութեամբ «անբարոյական, ալլատելու» կովկասահայերի հացը ուտելուց և մի կովկասահայ աղջիկն էլ իրր իր կեանքի ընկերուհի բնորելուց յետոյ: Սակայն դուք երջանիկ պատեհութիւնը ձեռքից փախցրիք ձեր աժան հերոսը քաղաքից-քաղաք պտտցնելու և բեմերից հայհոյել տալու, ինչպէս ամբողջ ամիսներ հայհոյեց ձեր «Պահակ» թերթուկի մէջ Կովկասահայ գրագէտներին, հանրային և քաղաքական գործիչներին, մեր պետական բոլոր կարեւոր և մեզ անհունապէս թանկ և սիրելի գէմքերին, կոռուողներին, մեռածներին, թիւրքի և քիւրդի ձեռքով խոշտանգուածներին հայհոյեց մեր հայրը, մայրը, կիներ, քոյրը — ինչպէս կարող է հայհոյել մի գինետան

զրան առջև թաւալուող մի արբած: Չէ՞ որ դուք և ձեզ նմանները Ազգունիի նման տիպեր էք փնտռում — «հեղինակաւոր» ճամբորդներ, որոնք Կովկասեան դժոխքի բոլոր մութ ծակ ու ծուկերը մտածելած իրենց հայրենասիրական պարտականութիւնը պատկելու համար օտար աշխարհները փախչին՝ ապահով ապրուստ փնտռելու նպատակով, ալտեղից «քննադատական» լուսանքներ թափելու հայրենական գոհարանի վրայ նահատակուող մի ամբողջ ժողովրդի հասցէին: Չէք կարող հայհոյել տալ, որովհետեւ հօտը ձեր ակնկալածից տարբեր ուղղութեամբ բարձրացաւ, և ձեր ամենադէտ քննադատն ստիպուած եղաւ պատից-պատ զարկուելու, պատասխանատուութիւնից խուսափելու համար: Մի հայ պարրերականի մէջ կովկասահայ մի քանի անհատների իրեն ուղղուած յանդիմանականները, պատճառ եղաւ՝ որպէսզի ձեր թերթուկի պաշտպանութեանը ապաւինէր, ջանալով իրեն արդարացրնել, և այն էլ ի՞նչպէս: Ձանալով իրեն արդարացրնել — թէ իր ամբաստանութիւնները ուղղուած էին Թիֆլիսի և Բաղուի հայութեան և ոչ գաւառական բնակչութեան հասցէին:

Խղճալի՜ դանկ: Աւելի քան երեք հարիւր հազարի հասնող հայութեան երկու հակա ընկերները ցեխի ու թուքի ալլանդակ աւազանի մէջ նետելով և մի քանի օղային համբոյրներ Կովկասահայ գիւղերը դրկելով՝ մի քանի չողոքորթ բառերն էլ սրան-նրան, և եղաւ, զնաց. — Մեղքերը քաւեց, ճշմարիտ վճիռը արձակեց, և վաստկած դափնիները վրայ պատկելով՝ կարող է գառնուկի անմեղ հայեացքով մարդկանց աչքերի մէջ նայել: Եւ հայրենասիրու-

թեան, համերաշխութեան պաշտօնական միակ եւ ճշմարիտ առաքեալները — «Պահակ»ի խմբագիրներն էլ «հարցը դոցուած» կարող են յայտարարել:

Սակայն հարցը «բաց» է, քանի որ ձեր կուսակցական այլանդակ հակամարտութիւնը տակաւին գոյութիւն ունի: Հարցը «բաց» է, որքան ժամանակ որ ոճրագործ գրչակներ «Ռուսահայ-Տաճկահայ» խնդրովը պիտի ազմկեն հրապարակը: Այդ հարցը կայ, ունի իր պատմական սե անցելար: Մեծ Յուդաների եւ մեծ Վասակների ճիւղային վիժուածքը, որ առաջին անգամ դուրս նետեց Արփիար Արփիարեանը աւելի քան քսան տարիներ առաջ: Որի չուրջը հիւսուեցաւ մի ամբողջ լրագրական գրականութիւն, քառորդ դար անընդհատ ամերիկահայ կեանքը ապականելով, եւ որը ուրիշ բան չէր, քան ձեր կուսակցական գործունէութեան Արփան եւ Օմեգան: Ո՞մն էք ուզում խաբել: Ո՞ւր կարող էք փախչել պատասխանատուութիւնից: Գոնէ Մխիթարեան հայրերը խնամքով պահում են Վիեննայի եւ Վենետիկի իրենց հոյակապ գրադարաններում «Մարտ»ի, «Ձայն Հայրենեաց»ի եւ հայ բոլոր պարբերականների հաւաքածոներն որոնց ուսումնասիրութիւնը բաւական է ձեր ինչ ինչ կուսակցական համար: Համոզուած եղէք, պիտի գտնուի մէկը, որ ուզէ անալիզի կտրուկ գործիքը ձեր ամբողջ կուսակցական կառուցուածքի վրայ փորձելու: Զէ՞ք վախենում պատմութիւնից:

Այժմ մի միջանկեալ դիտողութիւն:

Մէկին գող անուանողը պէտք չէ որ ինքը գող լինի: Ամերիկահայ որ եւ է անհատ կամ մանաւանդ թերթ իրաւունք չունի Կովկասի, Տրանսիլվանիա-

յի, Բուկովինայի, Ռումանիայի, Եգիպտոսի կամ Հնդկաստանի հայութիւնը անարգանքի խաչի վրայ գամելու, եթէ ինքը փաստ չունի հաստատելու, թէ «մաքուր», «առաքինի», «նահապետական» (ձեր անդրջրհեղեղեան բառարանով), անխարդախ եւ իսկական հայութիւնը, եւ առաւելապէս հայուհիները միայն Ամերիկայում գոյութիւն ունին: Դուք պէտք է որ վստահ լինէք ձեր անմիջական միջավայրի մաքրութեան վրայ: Վստահ էք: Կարո՞ղ էք պընդել, որ Բոստըն, Ուոթըրթաուն, Չրլսի, Փրաւիտէնս կամ ուրիշ վայրերի մէջ ապրող հայութիւնը Խրիմեան Հայրիկի երազած «Դրախտի Ընտանիքներ» են միայն, անբիծ, անարատ, մանկան ցնորքի պէս մաքուր: Կարո՞ղ էք այդ պնդել: Զէ՞ք ուզում հրապարակով խոստովանուիլ, որ Ամերիկայում ստեղծուել է մի անճոռնի գրութիւն, որի առջեւ ամեն ոք աչքերն է փակում, եւ ոչ ոք քաջութիւն չունի բարձրաձայն խօսելու այն «այլասերման» եւ «անբարոյացման» մասին, որին ենթարկում է շատ մեծ չափով այս երջանիկ կիսաշխարհի հայութեան մէկ մասը: Ի՞նչ էք արել մինչեւ այժմ, ամերիկահայ կենցաղը մաքուր պահելու համար, որ այժմ սկսել էք տասը հազար մղոն հեռու ապրող Կովկասահայութիւնը սրբադրել: Կարո՞ղ էք ուրանալ, որ ամերիկահայ ներքին կենցաղը աղտոտող եւ հայ ընտանիքները կործանող աւազակներ կան, որոնք ովսանձանքով են ողջունում հայ մամուլի կողմից, իբր «գեղարուեստի» կամ «մտաւորականութեան» ներկայացուցիչներ, եւ անառակուհիներ, որոնք պատուաւոր կիների մեծարանքին են արժանանում, բեմերի վրայ եւ ընտանիքներում:

Կարճ կտրեմ — բարոյական խնդիրներով ամենից քիչ զբաղուեցէք, ձեր և ամերիկահայ որոշ շրջանների շահը այդ է պահանջում: Խոհեմ եղէք հանգիստ թողնելու մեզ — Կովկասահայերիս: Մենք ձեզ նման քննադատների և ազգային կենցաղի վերանորոգիչների պէտքը չունինք: Անարգել կերպով շարունակեցէք վրովալ ամերիկահայ գուեհիկ և կիսավայրենի խուժանի մէջ, որ դուք ձեր յաւիտենական չողոքորթութեամբ կոչում էք «գիտակից հասարակութիւն»: Մենք, սակայն, ձեր արժէքը լաւ ենք ճանաչել, և խորհուրդ ենք տալիս մեզանից հետու մնալ:

Ամերիկահայութիւնը կամ նրա դռնէ մէկ որոշ գունաւոր դասակարգը բնորած է իր սեփական ճամբան և կարող է քայլել նրանով, մինչև որ անդունդին ծայրը հասնի և թաւալուի: Սրտի և մտքի անբարոյականացման վարպետներ — հայ անպաշտպան զրիչը յափշտակող աւագակներ՝ տակաւին կարող են տարիներով ծծել ամերիկահայութեան սրտի արիւնը, ապականել ու աղտոտել նրա զգացմունքները, եղբայրադաւ թշնամանքի որոմ ցանկելով ցեղի ջրակտոր հատուածների մէջ: Լրացրական ու կուսակցական մոռալ ու խաւար ոգիներ տակաւին կարող պիտի լինին տարիներով պղտորելու ամերիկահայութեան խաղաղ կենցաղը: Սակայն վերջապէս պիտի գայ այն օրը, երբ մեծ զիալը սկսէ կենսունակութեան նշաններ ցոյց տալ, ցնցուիլ և զողորդալ՝ դժոխային մի կօշմարից — ալլանդակ քնատագնապից սթափուելու համար:

Եւ այդ օրը ահաւոր պիտի լինի ձեզ համար:
Զգո՛ւ՛յ՛ կացէք ժողովրդական խղճի մըրիկից, որ պիտի պայթէ ձեր գլխին:

Յ. Գ. — Ներկայ գրքոյկը ձեր լրագրական կամ կուսակցական «գործունէութեան» վերլուծում չէ, այլ միայն թեթեւ նախազուշացում, որ հրապարակով ուղղում եմ ձեզ, հրաւիրելով ձեզ՝ ձեր թագաւորութեան սահմաններից դուրս չելնել: Այլապէս պիտի ստիպուիմ շատ աւելի երկարօրէն ձեզանով զբաղուիլ, որով, հաւատացնում եմ ձեզ, բացի անախորժութիւնից, ուրիշ բան չպիտի շահիք: Երեւ խայտութիւն մի՛ ունենաք երեւակայելու, թէ անմերձեւնալի ապառաժի վրայ կեցած էք — դուք այդ ինքնավստահութիւնից վաղ անցէք:

Եթէ դուք շարունակէք ձեր ներկայ գայթակղեցուցիչ բնթացքը՝ ես պիտի համոզուիմ, որ ձեր կուսակցական շարքերը բացարձակապէս կորցրած են ամեն զգայնութիւն և անկարող են սանձ դնելու ձեր անոյարկելի և խառնակիչ լեզուին: Սակայն այդչափ յոռետես չեմ, որովհետեւ գիտեմ, դռնէ մտտի վրայ համբուելիք աղնիւ հայեր կան ձեր շարքերում, որոնք զուրկ չեն մտածողութեան կարողութիւնից: Թերեւս նրանք կարող լինին մի բարեւար աւելով իրենց մթնոլորտը վնասակար տարրերից մաքրելու, նախանձախնդիր յայտնուելով իրենց կուսակցութեան ապագային:

(Վ Ե Ր Ջ)

Մամուլին պիտի յանձնուի շուտով

ԴԻՄԱԿՆԵՐԸ ՎԱՐ,

ԼՐԱԳՐԱԿԱՆ ԱԻԱԶԱԿՆԵՐ

Մի քանի խօսք

ՍԱՆՈՒԿ ՀԱՅ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ԹՇՆԱՄԻ ԱՄԵՐԻԿԱՀԱՅ

ԽԱՌՆԱԿԻԶՆԵՐԻՆ

Գ Ր Ե Գ

ԱԼԵԳՍԱՆԴՐ ՄԵԼԻՔ

Դիմել՝

S. KHETEIAN

2216 Telegraph Ave.

Berkeley, California

Գիճն է 20 սէնթ



<< Ազգային գրադարան

2848



NL0040708

